

Մարդու իրավունքների պաշտպանի իրավական դիրքորոշումները բարձրագույն ուսումնական հաստատությունների 2020-2021 ուսումնական տարվա ընդունելությանն կարգին առնչվող բողոքների կապակցությամբ

Մարդու իրավունքների պաշտպանը հուլիսի 21-ից մինչև հուլիսի 31-ն ընկած ժամանակահատվածում բարձրագույն ուսումնական հաստատությունների 2020-2021 ուսումնական տարվա ընդունելությանն առնչվող հարցերով դիմորդներից կամ նրանց ծնողներից ստացել է 49 անհատական բողոք և 55 անձի ստորագրությամբ 1 կոլեկտիվ: Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը մշտադիտարկման սկզբունքով ուսումնասիրել է բուհեր ընդունելության կարգի վերաբերյալ դիմորդների և նրանց ծնողների հրապարակային բողոքները:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում հանդիպման ընթացքում Պաշտպանը մի խումբ դիմորդների և նրանց ծնողների հետ քննարկել է վերջիններիս մտահոգությունները: Պաշտպանը նաև նախաձեռնել է մասնագիտական մի շարք քննարկումներ՝ կապված խնդրո առարկա հարցերի հետ, ինչպես նաև ուսումնասիրվել է ՀՀ վերաբերելի օրենսդրությունը:

Նկարագրված ուսումնասիրությունների և քննարկումների արդյունքներով մի շարք գրություններ են հասցեագրվել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, իսկ պարզաբանումները դրվել են սույն իրավական դիրքորոշումների հիմքում: Բարձրացված հարցերի վերաբերյալ քննարկումներ են տեղի ունեցել ինչպես Մարդու իրավունքների պաշտպանի և Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի, այնպես էլ Պաշտպանի աշխատակազմի և նախարարության մի շարք իրավասու աշխատակիցների միջև: Քննարկումների ընթացքում պետական կառավարման մարմինն ապահովել է անհրաժեշտ տեղեկությունների տրամադրումը:

Ըստ այդմ, դիմորդների ու նրանց ծնողների բողոքներով բարձրացված հարցերը ներկայացվում է հետևյալ հիմնական կետերով.

- 1) դիմորդները ստացել են բարձր միավորներ, սակայն բարձրագույն ուսումնական հաստատություններ չեն ընդունվել այն պատճառով, որ գործող կարգն

անարդարացի է և ոտնահարում է իրենց կրթության իրավունքը,

2) դիմորդները չեն կարողացել դիմում-հայտում իրենց ընտրությամբ նշված հաջորդ մասնագիտություններով ընդունվել բարձրագույն ուսումնական հաստատություն՝ տեղերի համալրված լինելու պատճառով,

3) 2020-2021 ուսումնական տարվա ընդունելության կարգի վերաբերյալ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը կամ նախարարության կազմում գործող մարմինները հանրային պատշաճ իրազեկումներ չեն ապահովել, ինչի արդյունքում խախտվել է կրթության իրենց իրավունքը,

4) իրազեկումների հարցում հաշվի չեն առնվել արտակարգ դրության գործոնը և արտակարգ դրությամբ պայմանավորված՝ երկրում կիրառված սահմանափակումները,

5) Պաշտպանին բողոք հասցեագրած մեկ դիմորդ ընդունելության քննություններին մասնակցելու հնարավորությունից զրկվել է արտակարգ դրության ժամանակահատվածում պետության կիրառած սահմանափակումների, մասնավորապես՝ որպես նոր տիպի կորոնավիրուսի (COVID-19) վարակակիր, պետության պահանջով ինքնամեկուսացման մեջ լինելու պատճառով:

Նկարագրված հարցերի առնչությամբ իրավական դիրքորոշումներ ձևավորելիս Մարդու իրավունքների պաշտպանը ղեկավարվել է բացառապես օրենքով իրեն վերապահված իրավասությամբ՝ Սահմանադրության 38-րդ հոդվածով ամրագրված անձի կրթության իրավունքի պատշաճ իրացումը երաշխավորելու նկատառումով:

Նույն սկզբունքով՝ Մարդու իրավունքների պաշտպանը ձեռնպահ է մնում այնպիսի հարցերի վերաբերյալ գնահատականներ տալուց, որոնք չեն առնչվում Պաշտպանի իրավասությանը կամ արդեն իսկ դիմողների կողմից ներկայացված են դատարանի քննարկմանը:

1. Բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության կազմակերպման և

իրագործման հարցում պետության հայեցողության շրջանակը

Կրթական համակարգի կազմակերպման և իրագործման, այդ ուղղությամբ անհրաժեշտ միջոցների ընտրության հարցում միջազգային պահանջները պետությունների համար ամրագրում են հայեցողության լայն շրջանակ¹: Սա նշանակում է, որ պետության իրավասության ներքո է գտնվում կրթության բնագավառում քաղաքականության իրականացումը և դրա կազմակերպական-իրավական հիմքերի ձևավորումը:

Ըստ այդմ, պետության հայեցողության շրջանակը տարածվում է անձանց մրցունակության գնահատման սկզբունքների ու չափորոշիչների ընտրության, դրանց ձևավորման և այլ հարցերի նկատմամբ:

«Վարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված կոլեկտիվ բողոքով դիմորդները և նրանց ծնողները տեղեկացրել են, որ 2020-2021 թվականի պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության միասնական քննություններին մասնակցելու արդյունքում «12.0»-ից «18.75» միավոր ստանալու պարագայում՝ միավորները 1-ին հայտով նշված բուհ ընդունվելուն չբավականացնելու պատճառով դիմորդները չեն ընդունվել բուհ կամ ընդունվել են 8-րդ հայտով նշված որևէ բուհ:

Ըստ բողոքների՝ քննության ամփոփման արդյունքում դիմում-հայտի առաջին հայտով ընտրված մասնագիտության համար չեն ստացել անհրաժեշտ միավորներ, սակայն իրենց ստացած միավորներն այնքան բարձր են եղել, որ գիտելիքը՝ որպես չափանիշ հիմք ընդունելու դեպքում կարող էին ընդունվել բուհ՝ դիմում-հայտում նշված հաջորդ մասնագիտությամբ կրթություն ստանալու համար: Բուհ ընդունվել, սակայն, հնարավոր չի եղել՝ հաջորդ մասնագիտություններով տեղերի համալրված լինելու պատճառով:

Ընդ որում, ըստ բողոքների՝ գործադրված նոր կարգը ստեղծել է անարդարացի պայմաններ. ցածր միավորներ ստացած դիմորդներն ընդունվել են բուհ, մինչդեռ բարձր

¹ https://www.coe.int/t/dghl/cooperation/lisbonnetwork/themis/echr/paper2_en.asp#P374_57714

միավորներ ստացածներն ընդհանրապես զրկվել են կրթության հնարավորությունից:

Բարձրացված հարցերի կապակցությամբ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը Մարդու իրավունքների պաշտպանին պարզաբանել է, որ ՀՀ կառավարության 2020 թվականի մայիսի 21-ի թիվ 826-Ն որոշմամբ հաստատված կարգով պահպանվել է մրցութային սկզբունքը. իրար հետ մրցակցել են նույն մասնագիտությունը նախընտրող դիմորդները՝ ըստ իրենց միավորների՝ մինչև տվյալ մասնագիտության համար սահմանված ընդունելության տեղերի համալրումը: Նախապատվությունը տրվել է քննության արդյունքներին, ընդունված են համարվել միևնույն մասնագիտությունը ընտրած անձանցից (առաջին հայտով) առավել բարձր միավորներ հավաքած դիմորդները: Դրանից բացի, նախարարությունն ընդգծել է մասնագիտական կողմնորոշման և մասնագիտության ընտրության կարևորությունը:

Հաշվի առնելով բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության կազմակերպման հարցում պետության հայեցողության շրջանակը և Մարդու իրավունքների պաշտպանի իրավասության շրջանակը՝ սույն իրավական դիրքորոշումներում Պաշտպանը ձեռնպահ է մնում գնահատելուց, թե ինչ համակարգ պետք է գործի երկրում կամ որոնք են ինքնին գիտելիքի, թե մասնագիտության նախապատվության առաջնային չափանիշներով բուհ ընդունելության կազմակերպման առավելությունները կամ թերությունները:

Մարդու իրավունքների պաշտպանը քննարկման առարկա է դարձրել այն, թե արդյոք գործադրված նոր կարգի պայմաններում պետությունը հաշվի է առել բոլոր այն գործոնները, որոնք կարող էին բացասական ազդեցություն ունենալ դիմորդների կրթության իրավունքի վրա և արդյոք պետությունը ձեռնարկել է բավարար միջոցներ, որոնք կարող էին չեզոքացնել այդ գործոնների բացասական ազդեցությունը ու արդյոք արդյունքում երաշխավորվել է մարդու իրավունքների իրացումը:

2. Պետության իրավական պարտավորությունների նշաձողը մարդու նկատմամբ արտակարգ դրության պայմաններում

Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ դրության իրավական ռեժիմը² ենթադրում է մարդու սահմանադրական իրավունքների սահմանափակումներ: Նման սահմանափակումները կիրառված են այն նկատառումով, որ պետությունն ունենա նոր տեսակի կորոնավիրուսային (COVID-19) համավարակին հակազդելու և հանրային առողջությունը, այլոց իրավունքներն ու ազատություններն առավել արդյունավետ պաշտպանելու հնարավորություն: Հենց այս իրավաչափ հիմնավորումն է, որ պետությանը հնարավորություն է տալիս մարդու նկատմամբ կիրառել սահմանափակումներ:

Կառավարության 2020 թվականի մայիսի 21-ի «Պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների 2020-2021 ուսումնական տարվա ընդունելության կարգը (ըստ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրի) և բարձրագույն ուսումնական հաստատությունների (ըստ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրի) 2020-2021 ուսումնական տարվա մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկը հաստատելու մասին» թիվ 826-Ն որոշման նախագծին կից հիմնավորումներում Նախագծի հեղինակը նշում է, որ բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության կարգը փոխելու անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում նոր կորոնավիրուսի կանխարգելման համար հայտարարված արտակարգ դրությամբ:

Ակնհայտ է, որ այս ամենը բարձրացնում է պետության իրավական բեռն ու պարտասխանավորության աստիճանը մարդու նկատմամբ: Դա ենթադրում է առավել մեծ ջանքեր գործադրելու պետության պարտավորությունը:

Մարդու իրավունքների պաշտպանը կարևոր է համարում արձանագրել, որ արտակարգ դրությունը չի նշանակում, թե պետությունն այդ կերպ ավելացնում է իր առավելությունները մարդու նկատմամբ կամ ձերբազատվում է մարդու նկատմամբ ունեցած պարտավորություններից: Ի վերջո, մարդն իր իրավունքների և ազատությունների սահմանափակումները «հանդուրժում» է հանուն նրա, որպեսզի

² ՀՀ Կառավարության 2020 թվականի մարտի 16-ի «Հայաստանի հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» թիվ 298-Ն որոշում:

պեպուրթյանը հնարավորություն տա արագ ու արդյունավետ կանխելու հանրային առողջությանը սպառնացող վտանգը:

Ուստի, արտակարգ դրության փաստը ավելի է մեծացնում պեպուրթյան պոզիտիվ պարտավորությունների աստիճանը և իրավական բեռը, քանի որ յուրաքանչյուր սահմանափակում պետք է լինի անհրաժեշտ, իրավաչափ և համաչափ կոնկրետ իրավիճակին ու ծառայի կորոնավիրուսի կանխարգելմանը³:

3. Բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության նոր կարգի ընդունմանն առնչվող ընթացակարգային թերացումները

Ա. Ընդունելության նոր կարգին առնչվող իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկումների հարցը

«Կառավարությունը 2020 թվականի մայիսի 21-ի նիստում հավանություն է տվել թիվ 826-Ն որոշմանը, որը վերաբերում է պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների 2020-2021 ուսումնական տարվա ընդունելության կարգին և բարձրագույն ուսումնական հաստատությունների 2020-2021 ուսումնական տարվա մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկին:

«Կրթության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ընդգրկվել է Կառավարության 2020 թվականի հունիսի 18-ի նիստում՝ որպես չզեկուցվող և ընդունվել Ազգային ժողովի յոթերորդ գումարման 2020 թվականի հունիսի 24-25-ի արտահերթ նստաշրջանում:

Ակնհայտ է, որ օրենքի նախագիծն անցել է ընդունման ընթացակարգային այնպիսի փուլեր, որոնք չեն վկայում հանրային կամ շահագրգիռ քննարկումներ անելու պեպուրթյան մտադրության մասին:

³ <https://www.ohchr.org/EN/Issues/AssemblyAssociation/Pages/Covid19freedomAssembly.aspx>

Թե՛ Կառավարության որոշման, թե՛ օրենքի նախագծերին կից ներկայացված ամփոփաթերթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ փաստաթղթերի վերաբերյալ նկատառումներ ներկայացրել է միայն ՀՀ արդարադատության նախարարությունը, իսկ «Կրթության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին կից ամփոփաթերթում՝ նաև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից առաջարկություններ և դիտողություններ չունենալու մասին նշում: Վերոնշյալը թույլ է տալիս ենթադրել, որ Նախագծերը կարծիքի համար չեն ուղարկվել այլ մարմինների:

Պետք է նշել, որ նշված նախագծերը Մարդու իրավունքների պաշտպանին կարծիքի նույնպես չեն ներկայացվել:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը այս թեմայով չի արձանագրել նաև հանրային քննարկումներ, այդ թվում՝ լայն կամ մասնագիտական հանրության մասնակցությամբ: Նման քննարկումներ չեն արձանագրվել նաև առցանց տարբերակով:

Մինչդեռ, նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ հանրային քննարկումներ իրականացնելու պահանջը նախատեսված է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով, իսկ Կառավարության 2018 թվականի հունիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակարգը հաստատելու մասին» թիվ 667-Լ որոշման 20-րդ կետի ուժով՝ մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող օրենքների նախագծերը նախքան կառավարություն ներկայացնելն ուղարկվում են Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին՝ կարծիքի:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքի համաձայն՝ Պաշտպանն իրավասու է մինչև մարդու իրավունքներին և ազատություններին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերի ընդունումը դրանց վերաբերյալ իրավասու մարմին ներկայացնելու գրավոր կարծիք:

Հանրային քննարկումներ իրականացնելու պահանջի չպահպանումը խնդրահարույց է հանրային քննարկում չանցկացնելու կամ ոչ պատշաճ իրականացնելու դեպքում ընդունված իրավական ակտերը առանց հասարակության, այդ թվում՝ շահագրգիռ

անձանց կարծիքները բացահայտելու և նախագծի ընդունման հետևանքով կրթության իրավունքի տեսանկյունից հնարավոր ռիսկերն ու դրանց բացասական հետևանքները կանխատեսելու, դրանք չեզոքացնելու տեսանկյունից:

Իհարկե, հասկանալի է, որ արտակարգ դրության իրավական ռեժիմը կարող է պահանջել նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ հանրային քննարկումների անցկացման սեղմ ժամկետներ:

Սակայն նախագծերի ընդունման հրապարտությունը չի վերացնում այդ փաստաթղթերի մասին հանրային քննարկումներ անելու անհրաժեշտությունը (իրազեկման աշխատանքների մասին խոսվում է սույն իրավական դիրքորոշումների հետագա շարադրանքում):

Առավել ևս, որ խոսքը վերաբերում է մարդուն անմիջականորեն առնչվող, նրա կրթության իրավունքին միջամտող, իսկ առանձին դեպքերում նաև այլ իրավունքների վրա ազդող կարգավորումների: Ընդ որում, պետք էր հաշվի առնել, որ մարդու կրթության իրավունքի վրա նոր փոփոխությունների հնարավոր ազդեցությունը լինելու էր երկարաժամկետ էֆեկտով ու չէր սահմանափակվելու արտակարգ դրության ժամանակային սահմաններով: Սա ևս բարձրացնում է պարասխանափու մարմնի կողմից հանրային քննարկումներ անելու անհրաժեշտությունը նախագծերի ընդունման փուլում: Ընդ որում, խոսքը վերաբերում է ոչ թե պասիվ, այլ ակտիվ քննարկումների:

Բ. Ընդունելության նոր կարգին առնչվող իրավական ակտերին կից ներկայացված հիմնավորումները

Իրավական ակտերի ընդունման հիմնավորումները կարևորագույն նշանակություն ունեն դրանց անհրաժեշտությունն ընդգծելու, ինչպես նաև հետագայում ընդունված ակտի մեկնաբանության ու կիրառության տեսանկյունից: Իրավական ակտերի նախագծերը պետք է ունենան պատշաճ հիմնավորումներ: Խոսքը հատկապես վերաբերում է այն

դեպքերին, որոնք անմիջական ազդեցություն են ունենում մարդու վրա, միջամտում են նրա իրավունքների իրականացմանը:

Մինչդեռ, Կառավարության որոշման և օրենքի նախագծերին կից ներկայացված հիմնավորումների ուսումնասիրությունը վկայում է, որ դրանցում առկա չէ այդ փաստաթղթերի ընդունման անհրաժեշտությունը հիմնավորող բավարար փեղեկավորություն: Մասնավորապես, բացակայում են այնպիսի հիմնավորումներ, որոնք կարտացոլեին առկա իրավիճակը, ինչպես նաև առկա չէ այնպիսի վերլուծություն, որը թույլ կտար գնահատել առաջարկվող փոփոխության ազդեցությունը մարդկանց կրթության իրավունքի վրա և կարգավորման համար ընտրված եղանակի նպատակահարմարությունը, դրանով հետապնդվող նպատակն ու ակնկալվող արդյունքները:

Նման մոտեցման համար անհրաժեշտ հիմնավորումների բացակայությունը հիմք է տալիս ենթադրելու, որ ընդունելության նոր կարգի առնչությամբ պետական կառավարման պատասխանատու մարմինները բավարար ուսումնասիրություններ չեն իրականացրել: Մինչդեռ, վերոնշյալ հարցերը պետք է քննարկման առարկա դառնային հենց նախագծերի մշակման փուլում կամ առնվազն դա պետք է երևար նախագծերի ընդունման անհրաժեշտությունը ցույց տվող հիմնավորումներից:

Կառավարության որոշման նախագծի մշակման գործընթացում անհրաժեշտ էր քննարկել, թե առաջարկվող կարգավորումը գործնականում ինչ հնարավոր ռիսկեր կարող է պարունակել և ինչ ազդեցություն կունենա կրթության իրավունքի իրացման փեսանկյունից՝ հաշվի առնելով նաև այն, որ 2020-2021 ուսումնական տարվա համար բուհերում ընդունելությունն իրականացվել է մեկ քննության արդյունքների հիման վրա ու այն էլ նոր տեսակի կորոնավիրուսի համավարակի պայմաններում:

Այս ամենն էլ պետք է արտացոլվեր փաստաթղթերին կից առկա հիմնավորումներում:

Ուստի, հիմք ընդունելով խնդրո առարկա փաստաթղթի անմիջական ազդեցությունը ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված կրթության իրավունքի իրացման վրա՝ կարծում ենք, որ դրանք ընդունելուց առաջ, իրավասու մարմինները պետք է ապահովեին ինչպես

այդ նախագծերով առաջարկվող լուծումների պատշաճ հիմնավորվածությունը, այնպես էլ հանրային քննարկումների պատշաճ անցկացումը, այդ թվում՝ մասնագիտական շրջանակներում:

Գ. Ընդունելության նոր պահանջների ներդրման իրավական պայմաններն ու հիմքերը

ՀՀ կառավարությունը պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների 2020-2021 ուսումնական տարվա ընդունելության կարգին առնչվող թիվ 826-Ն որոշումն ընդունել է՝ ղեկավարվելով «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասով և «Կրթության մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերով:

Այսպես, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգը, ըստ բակալավրի կրթական ծրագրի, սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ընդ որում, ընդունելությունը բարձրագույն ուսումնական հաստատություններ կատարվում է ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած մասնագիտությունների ցանկի՝ **մատչելիության, հրապարակայնության, արդարության, վստահելիության, թափանցիկության, հավասարության սկզբունքների կիրառմամբ:**

«Կրթության մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասը ևս նախատեսում է, որ պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում ընդունելության պահանջները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Սույն հոդվածի 5-րդ մասի ուժով Կառավարությունը բարձրագույն ուսումնական հաստատությունների տվյալ տարվա մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկը հաստատում և պաշտոնապես հրապարակում է մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 1-ը: Հարկ է նկատել, սակայն, որ **հաստատված ցանկում**

փոփոխություններ և լրացումներ կատարելն արգելվում է: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ փոփոխությունների և լրացումների կատարման, ինչպես նաև նոր ցանկի հաստատման անհրաժեշտությունը պայմանավորված է հայտարարված արտակարգ կամ ռազմական դրությամբ:

«Կրթության մասին» ՀՀ օրենքը վերոնշյալ բացառության լրացմամբ՝ ընդունվել է 2020 թվականի հունիսի 25-ին և ըստ կարգավորումների՝ տարածվում է 2020 թվականի մարտի 16-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Մինչդեռ, խնդիրն այն է, որ ՀՀ կառավարության թիվ 826-Ն որոշումն ընդունելու պահին վերոնշյալ կարգավորումները չեն գործել, ավելին, խնդրո առարկա ժամանակահատվածում արգելվել է արդեն իսկ հաստատված ցանկում փոփոխություններ և լրացումներ կատարել:

Հատկանշական է նաև այն, որ ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 1674-Ն որոշմամբ արդեն հաստատվել են Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով (առկա, հեռակա) 2020/2021 ուսումնական տարվա մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկը:

Այսպիսով, ստացվում է, որ 2020-2021 ուսումնական տարվա ընդունելության քննությունների անցկացման ընթացքում միաժամանակ գործել է բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելությանն առնչվող 3 փաստաթուղթ՝

1) ՀՀ կառավարության 2012 թվականի ապրիլի 26-ի թիվ թիվ 597-ն որոշումը, որը վերաբերում է Հայաստանի Հանրապետության պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգը հաստատելուն⁴:

2) ՀՀ կառավարության 2019 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 1674-Ն որոշումը, որն առնչվում է Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով

⁴ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75964>

(առկա, հեռակա) 2020/2021 ուսումնական տարվա մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկը հաստատելու հետ⁵:

3) Հայաստանի Հանրապետության կառավարություն 2020 թվականի մայիսի 21-ի թիվ 826-ն որոշումը «Պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների 2020-2021 ուսումնական տարվա ընդունելության կարգը (ըստ բակալավրի ու անընդհատ եվ ինտեգրացված կրթական ծրագրի) և բարձրագույն ուսումնական հաստատությունների (ըստ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրի) 2020-2021 ուսումնական տարվա մասնագիտությունների եվ ընդունելության քննությունների ցանկը հաստատելու մասին»⁶:

Ամփոփելով վերոգրյալը՝ մեր դիտարկումները փաստում են, որ պատշաճ քննարկումների չանցկացումը առաջացրել է բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունելության կարգին առնչվող փաստաթղթերի գործնական կիրառության հետ կապված խնդիրներ:

Կառավարության համապատասխան որոշումն ու օրենքն ընդունվել են նորմալիվ իրավական ակտերի նախագծերի ընդունման համար սահմանված ընթացակարգային պահանջների խախտումներով:

Ավելին, առաջարկվող լուծումների վերաբերյալ հանրային ոչ բավարար իրազեկվածությունը հանգեցրել է շահագրգիռ կողմերի՝ խնդրո առարկա կարգավորմամբ հետապնդվող նպատակի վերաբերյալ անորոշության ու նույնիսկ կրթության իրավունքի պատշաճ իրացման պայմանների տեսանկյունից անբարենպաստ հետևանքների:

Վերոնշյալի հաշվառմամբ Մարդու իրավունքների պաշտպանը հարկ է համարում արձանագրել, որ օրենսդրական նախագծերի ընդունման գործընթացները պետք է ապահովեն հանրային քննարկումների թիրախային և իմաստալից բնույթը (*meaningful participation*):

⁵ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=136669>

⁶ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=142766>

Սույն իրավական դիրքորոշումներով Պաշտպանը ձեռնպահ է մնում տալ գնահատական այն մասին, թե ֆորմալ առումով հարկապես ինչ իրավական ակտերով կամ այդ ակտերում փոփոխություններով պետք է ներդրվեր բուհեր ընդունելության արդեն ներկայում գործող կարգը կամ արդյոք Կառավարությունը դա արել է ճիշտ իրավական ակտերի ընտրությամբ: Հարցն այն է, որ դա բովանդակային ծավալով շատ ավելի մեծ հարց է, ուստի պետք է քննարկման արժանանա համապատասխան ձևաչափով ու գնահատականի ձևավորման համար բավարար ժամանակամիջոցում:

4. Բարձրագույն ուսումնական հաստատությունների 2020-2021 ուսումնական տարվա ընդունելության կարգի մասին ոչ բավարար իրազեկման աշխատանքները

Դիմորդները և նրանց ծնողները Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքներով հայտնել են, որ պատշաճ իրազեկված չեն եղել 2020-2021 ուսումնական տարվա ընդունելության կարգի դրույթների վերաբերյալ:

Նրանց պնդմամբ՝ նոր տեսակի կորոնավիրուսային (COVID-19) համավարակի հիմքով հայտարարված արտակարգ դրության ընթացքում հանրապետությունում կիրառվող սահմանափակումների պատճառով իրենք հնարավորություն չեն ունեցել մինչև բուհ ընդունելության համար հայտ լրացնելը կարգում փոփոխությունների վերաբերյալ տեղեկանալ դպրոցից կամ բուհերից:

Այսինքն՝ արտակարգ դրության իրավական ռեժիմի սահմանափակումների պատճառով հնարավորություն չեն ունեցել ֆիզիկապես այցելել որևէ վայր և ստանալ անհրաժեշտ տեղեկություններ, իսկ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը պատշաճ իրազեկում չի ապահովել: Դիմորդները տեղեկացրել են, որ իրենց կարգի փոփոխությունների մասին չեն իրազեկել նաև դպրոցներում, որտեղ նույնպես տեղեկացված չեն եղել, թե ինչ կարգ է գործում:

Մարդու իրավունքների պաշտպանն ընդունելության նոր կարգի վերաբերյալ հանրային պատշաճ իրազեկում չիրականացնելու վերաբերյալ հարցադրումներ է ներկայացրել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, որին ի պատասխան՝ նշվել է, որ մեծաթիվ լրատվամիջոցներ անդրադարձել են կարգի լուսաբանմանը:

Ըստ Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված պաշտոնական պարզաբանումների՝ քննարկվող հարցին անդրադարձել է նաև Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարը՝ թեմայի վերաբերյալ ունեցած ուղիղ միացման ժամանակ, որն ունեցել է մոտ 57.000 դիտում, բացի այդ, մոտ մեկ ամիս Նախարարության և Գնահատման և թեստավորման կենտրոնի աշխատակիցները հանդես են եկել պարզաբանումներով և հարցազրույցներով:

Նախարարությունը հայտնել է նաև, որ www.dimord.am կայքում գրանցվելուց առաջ դիմորդները հաստատել են, որ ծանոթ են 2020 թվականի ՀՀ բուհերի ընդունելության կարգին:

Դիմորդների և նրանց ծնողների՝ Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքները և հրապարակային մտահոգությունները, ինչպես նաև Նախարարության պաշտոնական պարզաբանումները հնարավորություն են տվել ձևավորել հետևյալ եզրահանգումները:

Նախ, պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների 2020-2021 ուսումնական տարվա ընդունելության կարգին առնչվող Կառավարության թիվ 826-Ն որոշումն ընդունվել է 2020 թվականի մայիսի 21-ին և ուժի մեջ է մտել մայիսի 26-ին:

Այդ որոշման համաձայն՝ դիմորդները ընդունելության քննության և մասնագիտությունների նշումով դիմում-հայտը գնահատման և թեստավորման կենտրոն են ուղարկում էլեկտրոնային (առցանց) եղանակով՝ մայիսի 25-ից մինչև հունիսի 15-ը՝ ժամը 18.00-ն:

Այսինքն՝ սրացվում է, որ ՀՀ կառավարության թիվ 826-Ն որոշումը, որով նախատեսվում է նոր կարգի ներդնում, ընդունվել է դիմում-հայտերի ներկայացման

համար նույն որոշմամբ նախատեսվող օրվանից ընդամենը 4 օր առաջ (ընդ որում, այդ օրերից 2-ը ոչ աշխատանքային են): Ավելին, որոշումն ուժի մեջ է մտել մայիսի 26-ին, այսինքն՝ դիմում-հայտերի ներկայացման ժամկետը 1 օր առաջ՝ մայիսի 25-ին սկսել է իրավական առումով հոսել ուժի մեջ մտած որոշման բացակայության պայմաններում:

Ակնհայտ է, որ ժամկետների հետ կապված նշված իրավիճակը խնդրահարույց է, եթե դա դիտարկում ենք նոր կարգի ներդրման ու անձի կրթության իրավունքի իրացման համար անհրաժեշտ պայմանների տեսանկյունից:

Արտակարգ դրության իրավական ռեժիմի գործողության պայմաններում այս հարցն առավել արդիական է դառնում՝ հաշվի առնելով ֆիզիկական բնույթի սահմանափակումները, այդ թվում՝ կապված մարդկանց ազատ տեղաշարժի, տեղեկությունների տարածման ավանդական եղանակների նվազման հետ: Նման իրավիճակը մեծացնում է պետության դերը՝ իրազեկման ապահովման հարցում այնպես, որ մարդու իրավունքների իրացման համար անմիջական նշանակություն ունեցող տեղեկությունները սպառիչ կերպով հասնեն հասցեատիրոջը:

Մարդու իրավունքների պաշտպանը հստակ գիտակցում է, որ արտակարգ դրության պայմաններում պետության հնարավորությունները նույնպես անսպառ չեն և պետությունը նույնպես կրում է դժվարություններ: Սակայն սա չի նշանակում, թե պետությունը չպետք է մարդու նկատմամբ իր պարտավորությունները պատշաճ կապարհի: Եթե պետությունը որոշել է գնալ բուիեր ընդունելության նոր կարգի ներդրման կամ գործող կարգի փոփոխության, ապա պետք է նկատի ունենա, որ ծանրաբեռնված է մարդու նկատմամբ պարտավորություններով՝ հաշվի առնելով, որ իր նախաձեռնությունը կոնկրետ դեպքում ազդելու է կրթության ու նույնիսկ մի շարք այլ իրավունքների վրա:

Հետևաբար, պետությունը պետք է իր քայլերը կատարի չափանիշի այնպիսի բարձրությամբ, որով կապահովվի իր նախաձեռնության առնչությամբ քաղաքացու հանդեպ բոլոր պարտավորությունների իրացումը:

Վերը նշվածով հանդերձ՝ ակնհայտ է, որ միայն իրավական ակտի պաշտոնական հրապարակումը բավարար չէ: Բավարար չեն նաև պաշտոնյաների հրապարակային

(ուղիղ եթերի ձևաչափի) ուղերձները կամ հարցազրույցները: Պետությունն այդ խնդիրը պետք է լուծի՝ ապահովելով իրական ու թիրախային իրազեկում՝ մատչելի լեզվով ու բոլորին հասանելի եղանակներով (օրինակ՝ հաշմանդամություն ունեցող անձինք կամ մարզերի բնակիչներ և այլն), անհրաժեշտ հաճախականությամբ և այլն:

Պետք է իրազեկումներն իրականացնել կարճ, ոչ երկար տեսանյութերով կամ իրազեկման այլ միջոցներ՝ թիրախային ուղերձների ապահովմամբ: Ընդ որում, անհրաժեշտ է օգտագործել թե՛ լրատվության ավանդական, թե՛ ժամանակակից, այդ թվում՝ սոցիալական մեդիայի հնարավորությունները: Միջազգային փորձը վկայում է նաև, որ այդ նպատակի համար ներգրավվում են նաև տեղական մարմիններ՝ ըստ անհրաժեշտության ու իրավիճակի:

Նախարարությունը Մարդու իրավունքների պաշտպանին հայտնել է, որ բարձրագույն ուսումնական հաստատությունների 2020-2021 ուսումնական տարվա ընդունելության կարգի վերաբերյալ իրականացվել են իրազեկման աշխատանքներ:

Սակայն Պաշտպանի աշխատակազմի դիտարկումները վկայում են, որ նախ՝ **կարգին վերաբերող Կառավարության որոշման դրույթները [մեծածավալ լինելու պարճառով] ներկայացված չեն եղել դիմորդների համար նախապեսված մատչելի տարբերակով, և երկրորդ՝ ժամանակային սղությամբ պայմանավորված՝ դիմորդները չեն ունեցել ընդունելության նոր կարգին լիարժեք ծանոթանալու հնարավորություն:**

Կայքում հրապարակված է նաև առցանց ընդունելության դիմում-հայտի լրացման տեսանյութ, սակայն այն չի արտացոլում ընդունելության նոր կարգի վերաբերյալ ամբողջական կարգավորումները. այն միայն ներկայացնում է առցանց ընդունելության դիմում-հայտի լրացման ձևը:

Ինչ վերաբերում է Նախարարության հայտնած այն տեղեկությանը, որի համաձայն՝ www.dimord.am կայքում գրանցվելուց առաջ դիմորդները հաստատել են 2020 թվականի ՀՀ բուհերի ընդունելության կարգին ծանոթ լինելու մասին, ապա բողոքների ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդել, որ դիմորդները դա դիտարկել են հայտի ներկայացման պայման: Դրանից բացի, ներկայացված կարգավորումների հետևանքները կանխապեսելի չեն եղել դիմորդների համար:

Ավելին, Կառավարության որոշման դրույթները նաև առանձնանում են իրավական բարդ ձևակերպումներով:

Ուստի, ընդունելության նոր կարգի մասին տեղեկությունները պետք է նախապես՝ մինչև որոշման ընդունումը, մատչելի ձևաչափով տրամադրվեր հանրությանը և հատկապես թիրախային լսարանին: Ընդ որում, դա պետք է արվեր ոչ թե միակողմանի մոտեցմամբ, այլ հանրության դիրքորոշումը հաշվի առնելով ու մասնակցային ձևաչափով: Այս կապակցությամբ պետք է հաշվի առնվեր նաև այն, որ ընդունելության քննություններին մասնակցող դիմորդները հիմնականում անչափահասներ են:

Իհարկե, հասկանալի է, որ Հանրապետությունում նոր տեսակի կորոնավիրուսի կանխարգելման համար հայտարարված արտակարգ դրությամբ պայմանավորված՝ Կառավարության հաստատած նոր կարգով բուհերում ընդունելությունն իրականացվել է դիմում-հայտերի առցանց ընդունման եղանակով: Ըստ այդմ, իրազեկման աշխատանքներն իրականացվել են առցանց եղանակով:

Վերոնշյալի առնչությամբ հատուկ ուշադրության առարկա պետք է դառնային նաև համացանցից օգտվելու հնարավորություն չունեցող դիմորդները:

Այս եզրահանգման հիմքում ընկած հիմնական գաղափարն այն է, որ ընդունելության նոր կարգի վերաբերյալ իրազեկման աշխատանքների համար պետք է սահմանվեին առնվազն ընդհանրական բնույթի ռազմավարություն կամ ժամանակացույց, որի շրջանակում իրավասու մարմինները կապահովեին տեղեկատվության իրական ու թիրախային հասանելիություն հավասարապես բոլոր դիմորդների համար: Խոսքը նույնիսկ գնում է ոչ թե ֆորմալ ռազմավարությունների, այլ համակարգված ու թիրախային աշխատանքի նկատառումով:

Ասվածի կապակցությամբ պետք է հատուկ ուշադրության առարկա դառնար հատկապես գյուղական վայրերում բնակվող դիմորդներին, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող մարդկանց իրազեկվածության ապահովմանը վերաբերող հարցերը: Իրազեկման աշխատանքների արդյունավետ իրականացման համար կարևոր է նաև դպրոցների ուսուցիչների մասնակցությունն ու ներգրավվածությունը:

Ընդ որում, այս աշխատանքները պետք է իրականացվեն նախապես՝ արտակարգ դրություն հայտարարելուց անմիջապես հետո, երբ ընդունելության կարգի փոփոխության համար առկա էր ողջամիտ կանխարեսելիություն:

5. Դիմորդների նկատմամբ ինքնամեկուսացման կամ մեկուսացման պահանջ ներկայացնելը և դրա հիմքով քննությանը ներկայանալու անհնարինությունը

Պաշտպանին հասցեագրված բողոքներից մեկով նշվել է, որ դիմորդը չի կարողացել մասնակցել ընդունելության միասնական քննությանը, քանի որ նոր տեսակի կորոնավիրուսի (COVID-19) վարակակիր լինելու հիմքով գտնվել է ինքնամեկուսացման մեջ: Ավելին, դիմորդն ավարտել է միջնակարգ դպրոցը գերազանց առաջադիմությամբ:

Այս կապակցությամբ Պաշտպանը հարցադրումներ է ներկայացրել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն և ստացել պատասխան այն մասին, որ ընդունելության քննություններին չմասնակցած (այդ թվում նաև ինքնամեկուսացման մեջ գտնվող) դիմորդների համար լրացուցիչ ընդունելության քննություններ չեն նախատեսվել: Ըստ Նախարարության՝ այդ դիմորդները հնարավորություն ունեն սեպտեմբեր ամսին մասնակցել բակալավրի կրթական ծրագրի հեռակա ուսուցման ընդունելության մրցույթին՝ հանձնելով տվյալ մասնագիտության համար սահմանված ընդունելության քննությունը:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմն արձանագրել է նաև Ազգային ժողովի պատգամավոր Թագուհի Թովմասյանի կարևոր հայտարարությունը խորհրդարանի նիստում առ այն, որ դիմորդները այս խնդրով դիմել են նաև իրեն: Ավելին, ԱԺ պատգամավորի հարցին պաշտոնական պատասխանով Կառավարության իրավասու ներկայացուցիչը հրապարակային պատասխանատվություն է ստանձնել կազմակերպելու քննություններ այս կատեգորիային պատկանող անձանց համար՝ առաջացնելով նաև համապատասխան հանրային ակնկալիքներ, սակայն դա այդպես էլ չի արել, իսկ Նախարարության պատասխանը փաստում է լրացուցիչ քննություններ չանցկացնելու մտադրության մասին:

Ստացվում է, որ 2020-2021 ուսումնական տարվա ընդունելության կարգի մշակման փուլում հաշվի չի առնվել արտակարգ դրության իրավական ռեժիմի սահմանափակումների պատճառով խնդիրների առաջ կանգնած դիմորդների բուհ ընդունելության հարցը: Արդյունքում՝ ինքնամեկուսացված և մեկուսացված անձինք չեն կարողացել մասնակցել ընդունելության քննություններին՝ իրենցից անկախ պատճառներով:

Այս կոնկրետ հարցով Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում նախաձեռնված վարույթով քաղաքացու բողոքի առնչությամբ դեռ համապատասխան գործողությունները շարունակվում են: